

Օտարաբաղաբացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄՇԽԿ“

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ | 884 ԹԻՒՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ, ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՑՈՎ,

ᠩ ᠢ ᠣ ᠪ ᠢ ᠨ ᠤ ᠨ

I. ՏԵՐՈՒԹԱՆ ԿԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕՎԻՏՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: ԸՆԴՀԱՆՈՐ ԵՊՈՒՆԱԾՆԵՐ, ԵՊԹԱԿԵՐՄԻՆՆԵՐ, ԵՐԱՐԵՐ: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: ԸՆԴՀԱՆՈՐ ԵՊՈՒՆԱԾՆԵՐ, ԵՊԹԱԿԵՐՄԻՆՆԵՐ, ԵՐԱՐԵՐ: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆԱՅՈՒՐՆԵՐ: VII. ՔԱՆԱՍՏԱՐԱԿԱՆ: ՖԵԼԽԱԾԻՆ, ՎԷՅԵՐ, ԽԵՆՏԱՐՈՂՅՈՒՆ և ԵՊՈՒՆԱԾՆԵՐ ԵՊՈՒՆԱԾՆԵՐ զԻՄՈՒԹԵԱՆ ԱՄԻՆ ճԱՆՈՒՆԵՐ, ԵՊԹԱԿԵՐՄԻՆՆԵՐ: VIII. ՈՍԱՏՈՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ: Տարեկան 10 բուրլ, վեց ամսվայ 6 բուրլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ՀԱՏՈՎ համարները 5 կօտէկ:

ՀԱՍՅԷՆ. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին, Տեղագրություն: Արտաազդ և Մարզա-
բնակ: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին
Ներքին լուրեր:—ԱՐՄԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտա-
քին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ
— ՅԱՅՏԱՐԱՌԻԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԿԱՐՏՈՐ ԾԱԳՐԻՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեղինակութիւնս Կոօի

Այս օրերս մեր ձեռքն անցաւ «Մշակի» ընթերցողաց յայտնի զուարճախօս «Լեռն»-ի մի փոքրիկ երկասիրութիւնը—մի վէպիկ արտասահմանուուսանող հայ երիտասարդների կեանքից, Ս. ր. ասւազը և Մ. ր. գարէտ վերնագրով: Գերմանացի ուսանողի կեանքը առ հասարակ և Գերմանիայի հայ ուսանողի կեանքը մասնաւորապէս չորսն այնքանս բազմազանութիւնի առանձնապատկուրթ կենսուն, որոնք մի օր և է վէպի կամ թէկուզ թէկենսուն:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ *)

(Խ/ան Սերգէիի Տուրգենևի յիշատակին)

I

«Նորին Կայսերական Մեծութեան թագաւոր
Կայսր Պետրոս I անունով, յայտնում եմ ընդհանուր
թիւն այս դժանդին»:

Այս խօսքերը ասվեցան բարձր, կծու, թե
լող ձայնով: Հիւանդանոցի գրադիրը որը նշ-
նակում էր մի հիւանդի անունը թանաքով ող-
ղած սեղանի վրա դրած մի մեծ և ճոված զբլի մէ-
ջը կարողացաւ զսպել իր ժպտաւ: Բայց հիւա-
նդն ուղեկցող երկու երիտասարդները չը ծիծ-
կեցին: Նրանք հազիւ կարողանում էին ծիծ-
կանգնել, որովհետեւ նրանք չէին քնել, ամբո-
րկու գիշեր անցկացնելով խելագարվածի հե-
տին բերել էին այստեղ երկաթուղով: Նախ-
վերջին կայարանում նրա կատաղութեան ու
փութիւնը սաստկացաւ. որտեղից որ է ճարեց
խելագարվածի շապկի և ժանդարմների ու կո-
րովասթենիի օգնութեամբ հազցրին հիւանդի
Այսպէս բերին նրան քաղաք և այսպէս հասցր-
նրան հիւանդանոցը:

*) Թարգմանություն «Отечест. Записки» (հնկայ տարւալ № 10) Գարչինի վէպից:

նահասարակ ժանրի (genre) մի նիւթ մատակարարել կարողանային: Եթէ քիչ թէ չատ կարողութեան տէր ուսանողը կարողանում է մասամբ մտնել հասարակական և ընտանեկան աւելի քարճճ շրջանները, ընդհակառակը նիւթապէս աղքատ ուսանողի կեանքը շատ անդամ աջիքան միակերպ է, որ եթէ ուսումնական զբաղմունքներ կամ մի քանի թատերական ու կրթչտանական զուարճութիւններ չը լինէին, ծանծարկութիւնից պիտի անսփշկէին խեղճները, հարմարեալ, ինչպէս զբոյցիկ հեղինակը ինքն էլ ասում է, գերմանացի ուսանողը քաղաքական շարժմանց ևս անտարբեր է մնում և ուսանողական ընկերութիւնները (Bürschenschaft), որ հեղինակը փոքր ինչ չափազանցելով լոկ գարեջուր խմելու ընկերութիւններ է անուանում, արդարեւ ողորմելի ու զրեթէ բոլորովին աննպատակ մնացորդներն են այն ընկերութեանց, որոնք մի ժամանակ, մանաւանդ դարուս սկզբում, ազատութեան պատերազմներում (Befreiungskrieg) իրանց հայրենիքը ֆրանկացիներից մաքրելուն պակաս չը նպաստեցին:

Նա զարհուրելի էր: Բացի սաստիկ կատաղու-
թեան ժամանակ պատառուտված մոխրագոյն ըզ-
ղեստից, նրա մարմինը ծածկված էր կապոյտ
ընթանից կարած մի կուրթբայով, որը ու-
նէր լայն օձիք և որի երկար թևերը, սևղմելով
նրա խաչաձև դուրսեան մէջ գտնվող ձեռքերը
կուրծքին, ամուր կապած էին յետգլու՛մը: Նրա
բարձրահասակ, լայն բացած աչքերը (նա չէր քնել
տասը օր) այլովում էին անշարժ, ջնրմ պայծա-
ռութեամբ. ջղային ցնցումը ձգում էր նրա ցածի-
չըթունքի ծայրը. խճճված գանդրահան մազերը
բաշաձև թափված էին ճակատի վրա. նա արագ
և ամուր քայլերով զրասնեանակի մի անկիւնից
գնում էր միւսը, հետաքրքրութեամբ՝ Նայելի
թղթերով լցրած արկղերին և երբեմն իր ուղե-
կիցներին:

«Տարբեր նրան աջակողմյան բաժանմունքը:
«Եւս ձեզ հետ արդէն անցեալ տարի այստեղ
էի: Ես զիտեմ, զիտեմ: Մենք տեսել ենք հիւան-
դանացը: Կս բոլորը գիտեմ և դոտար կը լինի-
լիմ խորաբ: Ես ծռվեց ղէպի զուսը: Պատասպանը
բաց արեւ նրան: Մի և նոյն արագ և ամուր ու վը-
ճողական ընթացքով բարձրացնելով իր անմիտ
զլուխը, նա զուրս եկաւ հաշուետնից և համա-
րեա վազելով գնաց աջակողմյան բաժանմունքը,
որը նշանակված էր սրա նման հիւանդներին հա-
մար: Ուղեկցողները հաշիւ կարողանում էին նը-
րան հետեւել:

— «Զանգը քաշիր: Ես չեմ կարողանում՝ դուք
իմ ձեռքերը կապել էք:»

Մեծ քաղաքների բուն հոսանքին ենթարկվելով հայ ուսանողը նոյնպես գերծ չէ մնում այս կամ այն օրերորդի կամ երիտասարդ կնոջ հետ սիրոյ յարաբերութեանց դաշն կռելուց, որ շատ սովորական երևոյթ է ուսանողական կեանքում, թէպէտ և այդ կէտում հայ երիտասարդը դարձեալ համեմատաբար շատ ամենատ ու չափաւոր է։ Իսկ սիրահարութեանները այն գոյներով, որով ներք իրակացեւ է մեր նոր հեղինակը ընդհանրապէս հազարապիւտ են ուսանողի կեանքում, և ճշմարիտ այդ փոքրիկ պատմութիւնը մնոյ վրա իսկապէս «հազար ու մէկ գիշերների» որ և է առասպելի տպաւորութիւնը պիտի թողնէր, և թէ մինք հեղինակի բերնից չը լսէինք, որ դա տոսկ եղելութիւն է։ Մենք մէպի նիւթը յառաջ բերելու նպատակ չունենք, թող ընթիկցողը ինքը այդ հաճութիւնը անձամբ գտայ։ Գործող անձինք իսկապէս չորս հոգի են—Արտաւազը, Մարգարէտ, Ելպիման և Մանուկանանց, մնացեալները ծագըրաբան հեղինակին ծառայել են, այսպէս ասել, ապուրը համեմելու (wärzen) և այդ համեմունքը իրանց տեղն են։ Արտաւազի տիպը կայ հայ ուսանողների մէջ և նրանց յաւիտեան ապուխտով, երչիկով և հակիթով կերակրվիլը նոյնքան ճիշդ է, որքան իրանց տէր-բարայ հայերի ժառանգութիւնն ու արքայաթիւրութիւնը։ Մարգարէտի մէջ նոյնպէս ոչինչ անդնական լսան չը կայ։ Մանուկանանցը թէպէտ մի փոքր նմանէ deus ex machina-ի, սակայն աչքի առաջ ունենալով, որ ամբողջ մէպը լսի իրողութիւն է, նոյնպէս կարելի է թելոյ տալ։ Գալով Ելպիմանին, պէտք է ասած, որ թէ և Ելպիմանները ամեն տեղ և ամեն շրջանում գոյութիւն ունեն, սակայն և այնպէս մեզ զարմացնում է զրա և սիրահար գոյոյի մէջ եղած յարաբերութիւնը։ Գիտցեք թէ նա իրաւ քարկան է կեղծած լինէր երկուսի առաջ, արտաւանանցիւ ինչ հարկ կար սիրահարական դադանի ու քննոյշ զրազրութեանց համար մի բարեկամի, նոյն իսկ ամենամտերմի, միջնորդութեանը դիմել, քանի որ Արտաւազը և Մարգարէտ երկուսն էլ կրթեալ, հասարակարան նեղ գաղափարներինք թափուր, բացարձակապէս սկզբ սիրող սիրահարներ էին և մինչդեռ այդ ինքը նոյն իսկ տղայի և աղջկան ծնողներից ոչ միայն ծածուկ չէր, այլ և նրանց հաւատութիւնն իսկ ունէր։ Ել ինչ հարկ կար սար ու

Դոճնապանը բաց արուս դռները և ճանապարհորդները մտան հիւանդանոցը: Սա մի մեծ քաբեայ արքունական շինութիւն էր, երկու մեծ դահլիճ, որոնցից մէկը ճաշատուն էր, իսկ միւսը ընդհանրական, մի լայն կորիթիօր ապակեի դռներով, որը տնտնութիւն պարտէզ և 20 սենեակներ ենքընի յարկում, ուր պարտով էին հիւանդները: Այնտեղ կային երկու առանձին սենեակներ եւս— մէկը ներսի կողմից պատած էր դռակներով, միւսը—տաթտակներով, որոնց մէջ նստացնում էին կատաղածներին և մի ահապին ու խաւար աւաղանասենեակ: Վերին յարկում լինում էին կանաքը: Այնտեղից լսելի էին աններդաշնակ ձայներ, որոնք ընդհատվում էին զանազան աղաղակներով: Հիւանդանոցը շինած էր ութման մարդու համար, բայց որովհետեւ նա ծառայում էր մի քանի նահանգներին, այդ պատճառով այնտեղ կային մօտ երեք հարիւր հօգին: Փայրիկ սենեակների մօտն մէկում կային չորս, հինգ մահճականներ:—Չմիտը, երբ հիւանդներին թողլ էլէին առկիս պարտեզի դնալու և երբ լուրջ պատուհանները ամուր ծածկված էին, հիւանդանոցում օդը անառնելի ծանր էր:

Նորիկ հիւանդին տարան մի սենյակ, որտեղ
գտնվում էին աւազանները: Քանի որ առողջ
մարդու վրա այս սենյակը կարող էր ծանր ադ-
պտորոտիւն թողնել, խելագարված, գրգռված
երեւակյալութեան վրա անշուշտ կազդէր առիւ
նաստիկը: Սա մի կտոր կամարածն սենեակ էր քա-
րեայ մածուցիկ յատակով, որը լուսանորված

ձոր ընկնել, կալիփաններին Postillion d'amour
չինել, քանի որ նամակները ուղղակի հասցեով
կամ փոստատուն կարող էին ուղղել: Գուք, պա-
րոն հեղինակ, ինձ կատեք, դա երիտասարդական
անփորձություն է, այո, բայց չէ որ ամեն տեղ,
լստ առածին «կարիքը երկաթ է կոտրում» (Noth-
bricht Eisen) և սէրը ամենալավանձր ուղեղներն
անգամ էլ ուսուցրում է:

Հատ կենդանի են քանի մի կռօխն յատուկ ծրիագրաշարժ գրչով գծած տեսարաններ. օրինակի համար Արտաազգիք սենեակի և կեցութեան նկարազգութիւնը, Մանուշակեանցի մօտ ժողովվող փեղբիկ շրջանակի տիպերը, որոնց մէջ Հայի աղան իր լեզուի սոսկալի աղճատութեամբ կատարեալ Պոլսեցի Նին հայկ տիպ է ներկայացնում. այն հայի, որի համար տաճիկները ասում են «Ներսիկի քնզըր նօսնօղ թօփու քօքուօր»։ Իսկ դօկտօր Մեկտոսեանցը իրաւ որ կարիկատուրի հասցրած է։ Միթէ՞ իրաւ այդպէս նիղ կոճկված գանգարաններ կան մեր հայ դօկտորների թւում, կամ խռովառու՞նու նման ծանրաբարոյ համարված բօխչիներ, որք իրանց կին անպատճառ մի այնպիսի հայուհի պիտի ունենան, որ մարդակալութիւնը բերան գլտենայ։ Այդպիսինքն ի տրամաբանութիւնը չէ ինչեցնում արդեօք նոյն իսկկռօի «Մշակում» նկարազգած Վիեննայի խնթանոցի ողորմելիների շարակրատ դատողութիւնը։ Այդ երկուքը մի փեղբ, ինչպէս ասում են մագերից քաշտալով (An den Haaren herbeigezogen) ներս բերած ֆիգուրներ են, որք դարձեալ իրանց մէջ բերելու նպատակին ծառայելու չափ իրանց դերը կատարում են, այսինքն ընթերցողին մի լաւ ծիծաղեցնումն Վրդդիկի մէջ կան նաև մի քանի ծայրայեղ համոմտութիւններ. օրինակի համար «Այլազեան Արքահամ առաքեալի ճանապարհին կոխել տուած հեղկաները» և այլն (երես 10)։ Կամ՝ դիպուք թէ Արտաազգիք երիտասարդական բուռն սիրոյ անջինջ յիշատակը կարող էր իր սենեակի նեղութիւնն ու տգեղութիւնը իրեն մոռացնել տալ, բայց այդ սենեակը, այդ հաւանոցը, ինչպէս ինքն ասում է, Ռօտշիլդի տան սրահ համարելու և խաշած հակութիւնքի սպլոտակները արժեք՞ ու դիմոցները ոսկի տանակուն համար Վոնն-Ֆիլօսոֆ երևակայութիւնը պէտք է։ Անշուշտ այդ կէտերը որպէսական ներշնչութեան արգասիք

անկերկնում շինած մի լուսամուտով: Պատերը և կամարները ներկած էին մոլո՛ղ կարմիր դոշմով: Կեղտոտութիւնից սեպցած յատակի վրա, նրա հետ մի և նոյն բարձրութիւնում շինած էին երկու քարեայ աւազաններ, ինչպէս ջրով լցված և երկու ձուռած փոսեր: Անաղին պղնձեայ վառարանը գլանաձև կաթնաճուղի ջուր տաքացնելու համար և պղնձեայ խողովակների ու ծորակների ամբողջ սխտէմայով բռնում էր պատեհանի հակառակ անկիւնը: Այս ամենը, միասնապէս հիւսնող ուղեղի համար, կրում էր ամբողջականապէս տըխուր և ցնորական բնաւորութիւն և աւազանին վերահասու լինող յաւիտեան լուռ խօխօլ-պահապանը իր մուռլ դէմքով սաստկացնում էր տպուկորութիւնը:

Երբ հիւանդին բերին այս զարհուրելի սե-
նեակը աւազանում դնելու և, համաձայն հի-
ւանդանոցի զլխատուր բժշկապետի սխառեմային,
նրա ծոծրակին մի մեծ ճանձնիկ (MYHHA) դնելու հա-
մար, նա զարագացաւ ու ստոկաց: Նրա զլխում պտը-
նում էին անհեթեթի մտքեր, մէջը միտալից առաւել
ալլաւանքի: «Այս ինչ է: Իննվիզիբլն է: Գաղտնի
տանջանաց տեղ է: Կարելի է հէնց ինքը դժոխ-
քնն է»: Վերջապէս նրա զլխումը մտաւ՝ թէ սա
մի որ և է ֆիլիքսական խոշտանգութիւն է: Զը
նայելով նրա սատարի բնորդիմահարութեանը, նը-
րան մերկայորին: Հիւանդութիւնից երկպառակեալ
ուժով նա հեշտութեամբ ազատուեցաւ որ բանի
պահպանմանի ձեռնարկից և վերջինիցն նրա հար-
ւածից բնական յատակի վրա: Վերջապէս չորս հոգի:

են, որը ներքին են հեղինակի առաջին հանգիստ գործա գալը ի նկատի առնելով, ոչ ոք առանց թերութեան չէ: Վերջացնելով մեր խօսքը, կա- սենք, որ զբոսը իր աշխարհ լեզուով, իր, մեղ համար, նոր, թող ներքին ինձ ասել, Պօլ-դէ-կօ- կեան ոճով արժանի է ընթերցանութեան և հե- տեաքար խեղճութեան մէջ կորած հեղինակը ա- մենայն իրաւամբ քաջաբերութեան արժանի: Թող թը և տիպը գեղեցիկ և վայելուչ են:

Յովհաննէս Լալայեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳԻՒՆ

Թիֆլիս, դեկտեմբ. 14-ին

Այն օրից, երբ երկաթուղու գծերը ամեն կեր- պով զիւրութիւն տուին եւրօպացուն մեր երկիրը մտնելու, ոչ ոք չէ կարող ուրանալ, որ մեր հա- րուստ և դեռ չը մշակված երկրի շատ և շատ արդիւնաբերական տեղերը անցան այդ վերջիննե- րի ձեռքը: Տեղալին ազգաբնակչութիւնը կամ բո- լորովին ծանօթ չէր նրանց և կամ շատ թույլ կերպով օգտվում էր նրանցից: Ամբողջ տասնեակ տարի- ներ Բաղուի նաւթային գործը գտնվում էր տե- րացիների ձեռքը, բայց և այդքան երկար ժամա- նակամիջոցի մէջ չերեց մի ընկերութիւն, չը յայտնվեցաւ տեղային մի կապիտալիստ, որ այդ փառաւոր և հարուստ արդիւնաբերութեան արտա- հանուլուն մի փոքր կանոնաւոր ձև տար: Գուք այսօր էլ Ա. քաղաքի մէջ կը տեսնէք հարկաւոր- ան գործարաններ (եթէ միայն կարելի էր այդ անունը տալ) ասիական ձևով, կեղտոտ և խար- խուլ դրութեան մէջ, մի կամ երկու ողորմելի կաթնամեղրով, որոնց մէջ պատրաստվում է տա- րեկան հազիւ թէ մի քանի հազար պոլո մարդու կերօսին: Այդ բոլոր գործարաններից իւրաքան- չիւրը գործում էր առանձին և ամեն մէկը նրան- ցից բաւական էր իր օգուտով. յանկարծ երեաց մի Նորէլ եւրօպական ամեն մի սարք ու կարգով, և այդ հակադրական ոյժի առաջ ընկնելիցան մէկը միւսի ետեքը բոլոր գործարանատէրերը, առանց երբէք մտքից էլ անցնելու միանալ միմեանց հետ:

Թիֆլիսից ոչ այնքան հեռու մի գերմանացի բարձր Ֆոն-Լուչենբախ ահա երրորդ տարի է կարծես, որ հիմնել է մի գործարան ապակեղէն մթերներով, որ պատրաստվում են մօտ 70 տե- սակ զանազան իրեղէններ, որանցից ամենանշաւոր են լամպային ապակիները, որոնցից իւրաքանչիւր տարի պատրաստում են մի քանի միլիոններ. մինչև այսօր այդ ապակիները ստացվում էին ար- տասանմանից, իսկ այժմ հաղիւ թէ առաջուան 1/8 մասը ստացվում լինի: Գաւառական քաղաք- ներն անգամ այդ գործարանից են տանում, որի տէրը, որպէս պատմում են, տարեկան հարիւր հազարներ է վաստակում:

Մի այդպիսի գործարան երկու ամիս է, ինչ որ սկսել է հիմնել՝ քաղաքից հազիւ մի 30 վերստ հեռու Մոխրեմեան անուն մի գիւղի մէջ,

որի մօտ մի ահագին տարածութեամբ տեղ առել է ֆրանսիացու մէկը 25 հազար բուրլով, այդ տեղը մի հիւսնալի հանք է ապակեղէնների պատ- րաստելու նիւթի, որին այժմ, ինչպէս տեղեկա- նում ենք հաստատ աղբիւրից, աւելի քան 1/2 մի- լիօն առաջարկողներ կան, բայց եւրօպացի այդ- պէս հեշտութեամբ երբեք ձեռքից չի հանի մի այդպիսի հարուստ հողը: Ձի անցնի մի տարի էլ և ահա դուք տեսնելու էք մի գեղեցիկ եւրօպա- կան կարգերով գործարան, որը ահագին մթերք- ներ է մատակարարում Կովկասին, Նոյն իսկ հէնց տեղային արդիւնաբերութիւնից:

Այդ բոլորը չէ. շատ և շատ մեր երկրի հա- րուստ արդիւնաբերութիւններ մէկը միւսից յետոյ անցնում են եւրօպացու ձեռքը, այնպիսի տեղեր, որոնց վրա մեր կապիտալիստները արժանի չեն համարում անգամ ուշադրութիւն դարձնելու:

Բայց ինչո՞ւ են պարագայում մեր կապիտալիստ- ները, մեր վաճառականական դասակարգը, նրան- ցից մի ստուար մեծամասնութիւն հէնց այսօր էլ կատարում է մի միջնորդի դեր՝ զննելով ապրանք գործարանատէրերից, երկրորդական ձեռքերից և վաճառելով նրանց մեր քաղաքներում. սակայն և այդ զբաղմունքը են ընկաւ մեր վաճառական- ների համար. գործարանատէրին այժմ ոչինչ չէ արդելում Կովկասի ամեն մի փոքր ի շատէ նշա- նաւոր քաղաքի մէջ բաժիններ բանալ, որի ծախ- սերի հետ առնելին անկարող է մրցել երկրորդա- կան ձեռքերից ստացող տեղացի վաճառականը, իսկ այդպիսի գործարանական պահեստներ արդէն մեծ քանակութեամբ բացվեցին մեր քաղաքներում: Եւ ահա այդ իսկ հանգամանքն է, որ սարսափե- լի կերպով նպաստում է առեւտրական ներկայ յուսանաւոր կրկնվելին, որը ընդհանուր կերպով զգալի է դարձել ամենքի համար: Իսկ դուք այդ ամենից յետոյ տեսնելու էք կրկին մի և նոյն վաճառականին, նստած իր «չախի» ետե, սպա- սում է մուշտարուն. նա տալիս է նրան ապ- րանք անգամ պակաս գործարանական գներով, միայն եթէ կանխիկ ստանալու է ապրանքի փողը. և ինչ էր կարծում, նա այդ փողը կրկին ուղարկում է գործարանատէրին նոր ապրանքներ ստանալու համար, և այդ անվարձ գործակաւա- րութիւնը անում է նրա համար ամբողջ տարիներ մինչև որ «բնանդրը կը կարէ», ինչպէս ասում է դարաբանացիս:

Արէլ Ապրեսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳԻՒՆ

Բաղու, դեկտեմբերի 10-ին

Անցեալ ամառը Շամախի գտնվելով, ևս աշ- խատում էի որքան կարելի է ծանօթանալ նրա ան- թիւ հայ գիւղերից գտնաւ մի քանիսի հետ: Բայց ո-

ւմ... Նա, զգալով իր ծոծրակի վրա դրած այ- րող առարկայի ազդեցութիւնը, սկսեց կատաղու- թեամբ մարտնչել: Մտաւ չը կարողացաւ եօղալ գնալ նրա հետ և չը զիտէր ինչ անել:—Ոչինչ չի կարելի անել, ասաց օպերացիա անող զինուորը: Պէտք է սրբել:

Այս խօսքերը սարսափեցրին հիւանդին. սրբ- ւել... Բնչը սրբել... ում սրբել... Բնչ, մտածում էր նա և յանկարծ մեռելային զարհուրանքով ծած- կեց աչքերը: Ձիւնորը վերցրեց կոշտ երեսաբերիչ և կոպտութեամբ սրբեց նրա ծոծրակը, պոկելով ձանձիկը և կաշիի դրսի կեղծը, թողնելով ներ- սինը—մերկացրած ու կարմիր: Այս օպերացիայից յաւաքացաւ ցաւ, որը անտանելի կը լինէր ա- ուող և հանդիստ մարդու համար ևս, իսկ հիւան- դին, ի հարկէ, երեւում էր, թէ նրա օրհասը մօ- տեցել է: Նա կատաղութեամբ լուփեց պահապան- ներին, ազատվեցաւ նրանց ձեռքերից և նրա տըլ- լոր մարմինը գլորվեցաւ սալ քարերի վրա: Նա կարծում էր, թէ իր գլուխը կտրած է: Նա աշ- խատում էր գոռալ, բայց չէր կարողանում: Նրան իրեն մահճակալի վրա արդէն ուշաթափ գիւ- թեան մէջ և նրան շուտով տիրապետեց խոր ու- ռեւային և երկար ընուն:

II

Նա արթնացաւ գիշերը, երբ ամեն ինչ խաղաղ էր: Մօտակայ մեծ սենեակից լսելի էր քնած հիւանդների շնչառութիւնը: Հեռուից, վառարանի

բովնտե կարճ ժամանակ մնացի Շամախում, ու- տի և կարողացայ միայն քանի մի անգամ յաճա- խել նրա մօտակայ գիւղերուցից հետեաները՝ Մեասեարի, Մաղրասայ, Քեաքեանջ և Քեա- լեախանի:

Այդ նամակովս ևս միտք չունեմ մանրամասն տեղեկութիւններ տալ յիշեալ գիւղերի մասին, ո- լովնտե ժամանակս չը ներեց օրինաւոր կերպով ծանօթանալ նրանց հետ: Այլ կը գրեմ միայն այն, ինչ որ աչքովս տեսել եմ և հաստատ գիտեմ:

Միասեարին գտնվում է Շամախու հիւսիսային կողմում վեց վերստ քաղաքից հեռու մի բարձր տեղում: Փաղաքից Մեասեարի գնաողները ստիպ- ված են լինում անդադար դէպի վերեւ բարձրա- նալ: Այդ գիւղը ունի առողջ կլիմայ և լաւ ջրեր: Մեասեարեցիները վարեհաճող կողմից նեղութիւն չունեն: Ունեն լաւ խաղողի այգիներ, որոնցից գինի են ստանում: Գիւղից փոքր ինչ դէպի հիւ- սիս, մի մեծ ձորի մէջ, գտնվում է վայրենի կաղ- նու (мелкий орех) անտառը, որի մէջ կաղնի կամ տեղացիների լեզուով տիգուռնի ծառերը ոչ թիւ ունեն, ոչ համար: Բայց յիշեալ պտուղը «ժուռ» լինելով, համարեա Մեասեարեցիներին ոչ ինչ օգուտ չէ տալիս և այդ անտառի տուած օ- դուտը կայանում է վառելափայտի մէջ: Յիշեալ ձորի միջով անցնում է մի գետակ, որի մի կող- մում, ապառաժի տակից, կաթիլ կաթիլ մի ջուր է բղխում, որը իր պաղութեան պատճառով անհա- րին է կէս թէյի բաժակ խմել: Ձորի բաց տեղե- րում միասեարեցիք վարում են՝ լօթի, ցորեն, դդում և այլն: Գիւղի մէջ մի փոքրիկ եկեղեցի կայ նոր շինված: Ուսումնարան չը կայ: Բնակիչ- ները ամենքն էլ հայ լուսաւորչականներ են, բա- ցի մի քանիսից, որոնք վերջին տարիներս բողո- քականութիւն են ընդունել:

Միասեարից դէպի հարաւ-արեւմուտ, քաղաքից նոյնպէս վեց վերստ հեռավորութեամբ գտնվում է Մաղրասայ գիւղը: Վերջինիս մէջ, ինչպէս ասում են, մօտ չորս հարիւր տուն հայեր կան: Նրանք խօսում են զլիսաւորապէս թաթերէն լեզուով, թէպէտ ամենքն էլ հայերէն գիտեն և քաղաք գա- լիս հայերէն են խօսում: Այժմ այնտեղ մի օրի- նաւոր դպրոց կայ իր գրադարանով: Գաղթնք էլ, գրադարան էլ առաջ են գնում, այնպէս որ կա- րելի է ասել, թէ մի տասն տարուց յետ մաղրա- սեցիները փոքր ի շատէ լուսաւորված հայ ժողո- վուրդ կը դառնան և փոքր առ փոքր կը թողնեն թաթերէն լեզուն: Այդ գիւղում կայ նոյնպէս մի գեղեցիկ եկեղեցի, որ ոչինչով պակաս չէ Շամա- խու եկեղեցիներից: Գիւղի հարստութիւնը զլիսա- ւորապէս խաղողի այգիներն են կաղնու: Մաղ- րասի գինին Բաղուի նման քաղաքում ամենալաւ գինիներից մէկն է համարվում: Այդ գինին օրէց օր հարստացնում է մաղրասեցիներին և իղուր չէ, որ նրանք գնալով իրանց արտերը այգիներին են փոխարկում: Գինին է պատճառը, որ անգաղաք այդ տեղում գեղեցիկ տներ են շինում, որոնք մի ժամանակ քաղաքի նմանութիւն կը տան գիւղին:

Գլխի մօտ թը սենեակում գտնվող հիւանդը մեծա- ձայն բառերով ինքն իր հետ խօսում էր և բար- ձրում, կանանց բաժանմունքից լսելի էր մի վայրենի երգ: Հիւանդը սկսեալ էր դնում այս հրն- չիւններին: Նա զգում էր սաստիկ թուլութիւն և վաստակութիւն իր բոլոր անգամների մէջ: Նրա պարանոցը սաստիկ ցաւում էր:

«Եւ եմ եւս Ինչ է եղել ինձ հետ», մտածեց նա: Նրա աչքի առաջ յայնկարծ մեծ դայրոյթով ներ- կայացաւ իր կիսանքի վերջին ամիսը և նա հա- կացաւ, որ ինքը հիւանդ է, հասկացաւ և այն, թէ ինչով է հիւանդ: Նա մտաբերեց իր յայտնած ան- հեթեթ մտքերը և սարսեց ամբողջ մարմնով. «Իսկ այս ամենը ի՞նչ անցել է, փառք Աստուծոյ, ան- ցել է», ասաց նա և նորից քնեց: Բացված լուսա- մուտը իր երկաթեայ վանդակներով նայում էր դէպի շրջապարսպի մօտ գտնվող մի տեղ, որը ծածկված էր վայրենի խիտ թուփերով և փոքրիկ ծաղկաւտ ծառերով: Թուփերի յետքում, ուղղակի պատուհանի դիմաց անբոյ լեկրով երևում էր չրջապարսպը, որի յետին նայում էին պարտի- զում գտնվող ծառերի կատարները, որոնք լուսա- ւորված էին քնքալ լուսնով: Այլ կողմից բարձրա- նում էր հիւանդանոցի սպիտակ շինութիւնը իր երկաթեայ վանդակներով ամրացրած պատուհա- ներով: Ձախ կողմից—մեռելատան սպիտակ ու պայծառ պատերն էին երևում: Լուսնակի մեղմ շողքերը, անցնելով պատուհանի միջով, լուսաւորում էին սենեակի յատակը, հիւանդի

ճարի չէ պատահում, որ շամախեցիները այս գիւղի աղջիկներից հարսնեւ չը տանեն, որովհետեւ նրանք առհասարակ գեղեցիկ են լինում:

Բայց մաղրասեցիները աւելի գեղեցիկ դէպք ունենալով, այնքան առողջ ու ֆիզիկական ոյժի տէր չեն, որքան նրանց գիւղից մի վերստ դէպի հարաւ գտնվող Քեաքեանջ գիւղի բնակիչները: Վերջիններս յայտնի են ինչպէս առողջ, բարձրա- հասակ, կարմրաթուշ տղամարդիկ: Պատմում են թէ, երբ մի քանի տարի առաջ սրանք մաղրասեցիների հետ տափի համար կռիւ ունէին, վերջինները, մօտ չորս հարիւր տղամարդիկ, փայտով ու քարով դրա- հաւորված յարձակվում են յանկարծ Քեաքեանջի- ցիների վրա: Քեաքեանջեցիները, որտեղից որ է, բաւաւսուն երիտասարդ են ընտրում ու ամեն մի կի ձեռք մի լաւ գաւազան տալով ուղարկում են թշնամու առաջը: Յիշեալ քառասուն երիտասարդ- ները ձեռնելով փախցնում են թշնամուն մինչև ի- րանց գիւղը:

Անցնենք այժմ Քեալեախանի գիւղը, որ գտն- վում է քաղաքից դէպի հարաւ, հինգ վերստ հե- ռու նրանից մի տափարակի վրա, որ շրջապատ- ված է մի քանի կողմից սարերով: Կարելի է ասա- փարակ տեղ գտնվելուցն է, որ յիշեալ գիւղի բնակիչները ներկայացնում են մի քանի, կարծես աշխարհից ձեռք վեր առած ժողովուրդ: Նրանք չը նայելով, որ քաղաքից բաւական մօտ են գտնվում և միշտ յարաբերութիւն ունեն նրա հետ, և ինչ- պէս պէտք էր սպասել, աւելի լուսաւորված պիտի լինէին, քան հեռու գիւղերի բնակիչները, ոչինչ յառաջադիմութիւն չունեն: Այդ ամառը ևս լու- ցի, որ յիշեալ գիւղում մի կօստանդուպօլսեցի հայ ուսումնարան է բացել և հետաքրքրուցի տեա- նել այդ հիմնարկութիւնը: Գիւղացիներից մէկը ընկաւ առաջ, որ տանէ ինձ այնտեղ և ես հե- տեկցի նրան: Գիւղից դուրս գալով իմ առաջնոր- դը յանկարծ կանգնեց և մատնացոյց արաւ ինձ մի գետնափոր խրճիթի վրա, որը գետնից մի ար- շին բարձր էր: Սա էր քեալեախանցիների ու- սումնարանը: Խրճիթի դռան մօտ նստած էր մի պատանի, որ ինձ տեսնելուն պէս հարցրեց, թէ ինչ եմ կամենում:

—Ցանկանում եմ վարժապետին տեսնել, ասացի ես:

—Վարժապետը քաղաք է գնացել եւմիշ բերե- լու, յայտնեց պատանին:

Կողպած դռնի ծակերից ներս նայելով, տեսայ ես, որ խրճիթի մէջ մի թախտ կար, որի տա- կում մի քանի ձմեռակներ էին շարած, իսկ երե- ուր ծածկված էր եւմիշ լիճակներով: Պատանին յայտնեց ինձ, որ վարժապետը իր եղբոր հետ ընկեր է և եւմիշ է ծախս անում: Այդպէս խրճիթ թախտի երեսը ուսումնարան էր, իսկ տակը «բախկախանայ»:

—Փանի աշակերտ կնայ, հարցրի ես:

—Առաջ 15 էր, իսկ այժմ եօթը:

—Գու էլ կարդում ես:

—Այո: Այս միջոցին պատանին մատնացոյց

տանջված երեսը և նրա անկողնու մի մասը: Այժմ նրանում խեղադարձեալ նշան չէր կարե- լի նկատել. նա քնած էր վաստակած մարդու խոր, ծանր քնով, առանց մի որ և է շարժողու- թեան և համարեա առանց շնչառութեան: Կարճ ժամանակամիջոցի համար նա արթնացաւ և հան- դարտ էր, որպէս առողջ մարդ, բայց շուտով կըր- կին քնեց:

III

—Ինչպէս էր դուք ձեռք գրում, հարցրեց նրանից բժիշկը միւս օրը:

Հիւանդը, որը այդ ժամանակ դեռ նոր էր ար- թնացել քնից, վերմակում փաթաթված էր:

—Շատ լաւ, պատասխանեց նա, վեր կենալով տեղից և հագնելով հողաթափները ու լաւաթի- շատ լաւ եմ, միայն այս է...

Նա ցոյց տուեց իր ծոծրակը: —Ես չեմ կարողանում առանց ցաւ զգալու պա- րանոցս ծռել: Բայց... ոչինչ... ամեն ինչ լաւ է եթէ հասկանում ես... իսկ ես հասկանում եմ:

—Գուք գիտե՛ք որ էք գտնվում:

—Ի հարկէ, պ. բժիշկ, ես գտնվում եմ զի- տնվում... իսկ եթէ հասկանում եմ—ամեն ինչ ինձ համար բոլորովին մի և նոյն է, բոլորովին մի և նոյն է...

Բժիշկը ուշադրութեամբ նայում էր նրան: Նրա գեղեցիկ, փայլալայն երեսը հիւսնալի կերպով ամրացած ոսկեգոյն միւրուքով և ոսկեայ անոցով...

արաւ ինձ մի երկարահասակ երիտասարդի վրա, որը մէջքին մի անգլին պարկ կախած մօտեցում էր մեզ:

—Այ, վարժապետը եմի՞նչ է բերում քաղաքից, ասաց պատանին: Ես ծիծաղաւ չը կարողացայ պահել և տեսնելով որ վարժապետը հասել է մեզ, հեռացայ այնտեղից:

Վերջացնելով նամակս յայտնում եմ, որ յիշեալ գիւղերի մասին շատ հետաքրքիր բաներ կարելի է գրել, բայց իմ իմացածս սա է: Առհասարակ Շամախու բոլոր հայ գիւղերը ուսումնասիրութեան կարօտ են և շատ հետաքրքիր կը լինեն նրանց ուսումնասիրողի համար: Ես ճանաչում եմ Շամախու բնակիչը այնպիսի ուսեալ երիտասարդներին, որ շատ անգամ գնալով գիւղերը շաքարեղէնով մնում են այնտեղ: Ինչու ալ չէ պարտնելը չեն աշխատում լոյս աշխարհ հանել գիւղացիներին իրանց տնտեսական դրութենով, իրանց սովորութիւններով և այլն: Զարմանալի է:

Ս. Թառայանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ 7—8 ամիս է ահա Գանձակում տարածված է ծաղիկ հիւանդութիւնը և հարկւրաւոր մասնակներ դո՛ս են գնում այդ ախտին: Զը նայելով որ ամեն օր 5—6 երեխայ տանում են հանգստարանը թաղելու, մինչև այժմ ոչ մի միջոց չէ գործադրված դրա դէմ:

Մեզ գրում են ԱՍՆԱՅԻՍՅԻՑ հետեւեալը: «Մի ամենակարևոր հարցի վրա, որ մեզ ախալցխացիներին համար մեծ նշանակութիւն ունի, բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում մեր պարերկրական թերթերի թղթակիցները.— դա մանկաբարձութեան հարցն է: Ախալցխայում, որպէս Ախալքալաքում և Ալեքսանդրապոլում, մանկաբարձուհիների պաշտօն կատարում են այնպիսի կանայք, որոնք ոչ թէ միայն զուրկ են մանկաբարձութեան վերաբերեալ գիտութիւնից, այլ և հասարակ գրեւ-կարգաւոր, և այդ պատճառով էլ բազմաթիւ յղի կանայք դո՛ս են գնում մեր այդ ազատ մանկաբարձուհիներին: Ախալցխայում ամեն մի այրիացած կին, որը 40 կամ աւելի տարեկան է դառնում և միջոց չունի ապրելու, իրան մանկաբարձուհի է հրատարակում և այդ բանի վրա ուշադրութիւն չէ դարձնում ոչ քաղաքային բժիշկը և ոչ էլ հասարակութիւնը: Այդ ինքնակոչ մանկաբարձուհիները սկսելով իրանց նոր պաշտօնը, հինգ սկզբներում մի քանի աներ դժբաղդացնում են, զրկելով տանտնտէրներին իրանց կառավարող ձեռքից, իսկ դժբաղդացած ընտանիքները միտնալով են ասելով թէ՛ «Աստուած տուեց, Աստուած առաւ»: Այս ամենից յետոյ մի համեստ առաջարկութիւն կանենք Ախալցխայի քաղաքային կառավարութեանը և հասարակութեանը:

Ինչպէս քաղաքային կառավարող և հանգիստ աշխարհում անշարժ էր և անթափանցելի: Նա դիտում էր հիւանդներին:

—Ինչու էք այդպէս ուշադրութեամբ նայում ինձ վրա: Դուք չէք կարող կարգաւ այն, ինչ որ ես իմ սրտում գրած ունեմ, ասաց հիւանդը.— իսկ ես պարզ նկատում եմ ձեր սրտինը: Ինչու էք չարագործութիւն անում: Ինչու էք հաւաքել այստեղ այս թշուառներին և ինչու էք նրանց այստեղ պահում: Ինձ համար մի և նոյն է, ես ամենը հասկանում եմ և հանգիստ եմ, իսկ նրանք: Ինչու համար են այս տանվանքները: Այն մարդու համար, որը տեսնում է իր մէջ բարձր մտքեր, մի և նոյն է որտեղ ապրել և ինչ զգալ, նրա համար մինչև անգամ մի և նոյն է ապրել կամ չապրել... Այսպէս չէ:

—Շատ կարելի է, պատասխանեց բժիշկը, նրա տեղով անհեղինակ մի անկիւնում դրած աթոռի վրա, որ կարողանայ լաւ նայել հիւանդին, որը պարզեցնում քայլերով գնում էր մի անկիւնից միւսը, քաջ տալով օտներում հողաթափները և բաւականից պատրաստած ու կարմիր գծերով դեղեկացրած խալաթի փէշերը: Բժիշկին ուղեկցող ֆելդշերը և վերակացուն շարունակում էին շնամբում կանգնել:

—Ես ես ունեմ նրանից, բացականչեց հիւանդը: Եւ երբ նրան գտայ, զգացի ինձ, կարծես նորից ծնված. զգայարաններս սրկեցան, ուղեղս սկսեց շատ լաւ գործել... Այն, ինչ որ առաջին

թեանը՝ հեռացնել այդ բոլոր ինքնակոչ մանկաբարձուհիներին, որոնք թեով ինչ էն և խտրաբարեկէլ նրանց այդ պաշտօնը և հրաւիրել մանկաբարձութեան վկայական ունեցողներին: Ախալցխայում արդէն կայ մի ուսում առած ուսումնասիրողը և եթէ մի ուրիշն էլ լինի, այն ժամանակ դրանք բաւական կը լինեն Ախալցխայի համար և մեք կազմակերպեմք զանազան ցաւալի դէպքերի ակնադատելի լինելուց: Կամ աւելի լաւ կը լինէր, որ մեր հասարակութիւնը Նիկոսիւսի թերթի մի երկուսին իր հաշով թիֆլիս ուղարկէր այդ արհեստը սովորելու, այն պայմանով, որ նրանք, իրանց ուսումը աւարտելուց յետոյ վերադառնալիս Ախալցխայ և հասարակութեան համար մատչելի գնով պարագլխին մանկաբարձութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովը 325 ձայների մեծամասնութեամբ 191-ի դէմ մերժեց պատգամաւոր Բասկայի առաջարկութիւնը Ֆրանսիական դեսպանութիւնը վատիկանի մէջ ոչնչացնելու մասին: Ֆրանսիական կղերական լրագիրները սպառնում են, որ պապը յետ կը կանչի իր նուիրակ մօնսիէնօր Բէնէդէկին, իսկ արմատական լրագիրները խորհուրդ են տալիս, որ Ֆրանսիան յետ կանչէ իր դեսպանին: Գերմանիայի մէջ հաւատացած են, որ պապը չա՛հ չուի իր նուիրակին յետ կանչելով և խնդրաշարժ ոչնչացնելով: Ֆրանսիական ֆինանսների մինիստրութիւնը իւրաքանչիւր տարի 50,000,000 ֆրանկ է վճարում կաթոլիկ եկեղեցին պահպանելու համար: Ֆրանսիայի մէջ էլ հաւատացած են, որ թէ կառավարութիւնը և թէ պապը փոխադարձ դիւմենք կանեն:

—Русск. Курьеръ» լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պոլսից: «Բ. Գուռը և սուլթանի պալատը զբաղված են քրիստոնեաների արտօնութիւնների հարցով: Կարծում են, որ Ռուսաստանը կը միջամտէ այդ հարցին: Նորին Մեծութիւն Կայսր Ալեքսանդր յայտնեց իր հաստատ ցանկութիւնը, որ ուղղափառ և արևելեան քրիստոնեայ բոլոր եկեղեցիները չենթարկվին մանկապանական մայրակառնութեանը: Հակառակ դէպքում հետեանքները վատ կը լինեն: Ռուսաց դեսպանատան ազդեցութիւնը զգացվում է: Քրիստոնեայ լրագիրները այդ միջամտութեան մասին չեն կարող ազատ խօսել, բայց բոլոր քրիստոնեաները, մանաւանդ յայտնել և հայերը, որոնք թիւրքաց քրիստոնեաների մեծամասնութիւն են կազմում, շատ ուրախ են այդ միջամտութեան առիթով:

—Ֆրանսիական դեսպանը Բերլինի մէջ, «National Zeitg.» լրագրի հաղորդութեան համեմատ, շատ լաւ ընդունելութիւն գտաւ Ֆրիդրիխսթրէշի

ում հակացվում էր զանազան կշռադատութիւնների (умозаключение) միջոցով, այժմ ես հասկանում եմ հնչութեամբ: Ես իրազեկվեցի այն ամենը, ինչ որ մշակել է փիլիսոփայութիւնը: Ես համոզված եմ որ տարածութիւնը և ժամանակը կեղծ և երևակայական հակացողութիւններ են: Ես ապրում եմ բոլոր դարերում: Ես ապրում եմ ոչ մի տարածութեան մէջ, ամենայն տեղ, կամ ոչ մի տեղ, ինչպէս կամենում էք...

—Եւ այդ պատճառով ինձ համար մի և նոյն է՝ կը պահէ ինձ այստեղ, թէ կարճակէք, ազատ եմ, թէ կապած: Ես նկատեցի, որ այստեղ կան մի քանի ինձ նմանները եւ: Բայց մնացեալներն համար այսպիսի դրութիւնը սպարտիկ է: Ինչու դուք նրանց չէք ազատում: Ո՞ւր է հարկաւոր...

—Դուք ասացիք, ընդհանրեց նրան բժիշկը, թէ դուք ապրում էք ոչ մի ժամանակում և ոչ մի տարածութեան վրա: Այնուամենայնիւ, չէ կարելի չը համաձայնվել, որ մենք ձեռք հետ այս սենեակում ենք և որ հիմա (բժիշկը հանեց ժամացույցը) ժամը ուղիղ տասն ու մէկի կէսն է և 18** թվականի մայիսի 6-ն է: Ի՞նչ էք կարծում դուք արա մասին:

—Ոչինչ, ինձ համար մի և նոյն է՝ որտեղ ապրել ու որտեղ լինել: Եթէ ինձ համար այդ մի և նոյն է, արդե՞ք չէ՞ նշանակում, որ ես միշտ և ամեն տեղ եմ: Բժիշկը ժպտաց:

մէջ և դրա մասին անյապաղ փարկ հեռագրեց: Բացի այդ նրա հեռագիրը հաստատում է, որ Գերմանիան մտադիր է Տօնկինի գործի վերաբերութեամբ խիստ չէզոքութիւն պահպանել:

—Բարեցիւնայից հեռագրում են լրագիրներին, որ գերմանական թագաժառանգը անցաւ քաղաքի մէջ բաց կառքով և առանց պահպանների, միայն կառքի առաջ գնում էին չորս օֆիցերներ ձիաներով: Թագաժառանգը չը կարողացաւ ներկայ գտնվել այն հանդէսներին, որ քաղաքը նրա համար պատրաստել էր և իր տեղ ուղարկեց գերմանական դեսպանին:

—Բանակցութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի մէջ Տօնիսի գործերի վերաբերութեամբ վերջանում են: Իտալական կառավարութիւնը մտադիր է դրա մասին յոշմով լինի մի օրինագիծ ներկայացնել պարլամենտին: Իտալական պատգամաւորներից մէկը կամենում էր այդ բանակցութիւններին մասին հարց առաջարկել կառավարութեանը, բայց արտաքին գործերի մինիստրը ասաց, որ Ֆրանսիական կառավարութիւնը արեւ է բոլոր դիւմենքը, որոնց կարելի էր խնդրել:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս աճ ու զ ո զ ծ ա խ վ ու մ է ր անգլիական ծովափնայ քաղաք Ուէրարօն (Կանդի-դանշայր), որը մօտ 2000 բնակիչներ ունի: Քաղաքը գնահատված էր 24,000 ֆունտ ստերլինգով, որի պատճառով աճուրդը չը կայացաւ:

«Berliner Tageblatt» հաղորդում է ստատիստիկական թւեր շաքարի արդիւնաբերութեան մասին Եւրոպայում: 1882—1883 թվականում Եւրոպայում շաքար արդիւնահանող գլխաւոր երկիրները վեց են, այն է՝ Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա, Ռուսաստանը, Բելգիա և Հօլլանդիա: Այդ երկիրները 1882—83 թվականում պատրաստեցին բոլորը 41 միլիոն ցէնտներ շաքար: Այդ քանակութիւնից մեծ մասը Գերմանիան է պատրաստում, այն է՝ 15 միլիոն: Գերմանիան եւրոպական շաքարի արդիւնահանութեան գլուխն է կանգնած, զբաղեց յետոյ զալիս է Աւստրիան, որը 9 1/2 միլիոն շաքար է արդիւնահանում, յետոյ Ռուսաստանը—5 միլիոն, Բելգիան—մէկ և կէս միլիոն և Հօլլանդիան—կէս միլիոն: Շաքարի գործարանների թիւով եւ Գերմանիան առաջին տեղն է բռնում. 1,204 գործարաններից նրա մասը 857 է կամ 29,6 պրօցենտ, յետոյ զալիս է Ռուսաստանը, թէպէտ նա աւելի պակաս շաքար է արդիւնահանում, բան Աւստրիան և Ֆրանսիան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՀԻՍԻՍՏՈՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 15 դեկտեմբերի: Բարձ-

—Օտարոտի լօգիկա է, ասաց նա, տեղից բարձրանալով: Շատ կարելի է՝ ձեր ասածը ճշմարիտ է: Յոստուլիւն... չեք ցանկանում դուք սիգար ծխել:

—Շնորհակալ եմ ձեզանից: Նա կանգնեց, վերցրեց սիգարը և ատամներով պոկեց նրա ծայրը: «Շիլլեր օգնում է մտածելուն, ասաց նա, այս սիգարը ներկայացնում է ամբողջ աշխարհը, սրա մի ծայրում տալիս է (ЩЕЛОЧ), միւսում թթու (КИСЛОТА): Այսպէս է պահպանվում և տիեզերքի հաւասարակշռութիւնը, որի մէջ չէզոքանում են հակառակ սկզբունքները: Միայն բարի, պի բժիշկ:

Բժիշկը հեռացաւ: Հիւանդների մեծամասնութիւնը սպասում էր նրան: Ոչ մի վարչութիւն չէ օգտվում այնպիսի յարգանքով իր հպատակներից, ինչպէս բժիշկը—հոգեբանը իր խելագարներին:

Հիւանդը, մնալով միայնակ, շարունակեց տեսնելու ման գալ: Նրա համար բերին թէյ: Նա, առանց նստելու, երկու անգամում դատարկեց բաժակը և համարեա մի վայրկեանում կլանեց ծառայի բերած կտոր հացը: Յետոյ դուրս եկաւ տնեակից և մի քանի ժամ, առանց կանգ առնելու, արագ և ծանր քայլերով շրջեց շինութեան բոլոր անկիւնները: Որը անձրեային էր. հիւանդներին թոյլ էին տալիս պարտէզ գնալու: Երբ ֆելդշերը որոնում էր նորեկ հիւանդին, նրան ցոյց տուին կորիզորի վերջը: Նա ուշադրութեամբ նայում էր ապակեայ դռան միջով պարտիզում

լազդին հրամանը կատարելու համար՝ կրեզիտային դրամները ոչնչացնելու մասին, նրանց հաւաքման համեմատ պետական բանկի մէջ և դրամական շրջաբերութեան պահանջների համեմատ այսօր բանկը պրեց 30 միլիոն կրեզիտային դրամներ: Այլեւ՝ լու ժամանակ ներկայ էին Ս. Պետերբուրգի բօրսային մասնաժողովի անդամները և նախագահը, ուստաց և օտար առեւտրականները ներկայացուցիչները:

Կիւն, 15 դեկտեմբերի: Դատաստանական պալատը, քննելով Խէրսոնի վաճառական Պասկալի ժառանգների գանդատը Կիւնի նահանգական դատարանի վճռի դէմ, որ չը հաստատեց 250,000 ռ. արժողութեան կաշի կտակը, որովհետեւ Պասկալ ինքնասպանութիւն գործեց, ոչնչացրեց դատարանի այդ վճիռը:

ՄՍՍԿՎԱ, 15 դեկտեմբերի: Մօսկվայի նահանգական զեմստովի ժողովը 1884 թվականին ժողովրդական լուսաւորութեան համար նշանակեց 106,360 ռուբլ:

ՏԱՄԲՈՎ, 15 դեկտեմբերի: Տամբովի գաւառի մէջ յայտնվեցան կեղծ ոսկիներ, որոնք շինված են պղնձից:

ՎԵՍԿԱ, 15 դեկտեմբերի: Նահանգական զեմստովի ժողովը 300 ռուբլ նշանակեց այն դրամագլխի համար, որ կազմվում է Ս. Պետերբուրգի մէջ կանանց կուրսերի համար տուն դնելու նպատակով:

ԵԿԱՏԵՐԻՆՍՍԿԱ, 15 դեկտեմբերի: Նահանգական զեմստովի ժողովը, որ 14 օր տևեց, փակվեցաւ:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 15 դեկտեմբերի: Պետական խորհուրդը շուտով կը քննէ գործը պետական բանկին թոյլ տալու մասին գանձարաններին կից բանալ խնայողական կասսաներ և գաւառական քաղաքների մէջ բանալ այդպիսի կասսաների բաժիններ: Ֆինանսական սենատը ներկայացրեց Բարձրագոյն իշխանութեանը նաւերի ժողովրդական ծովային պաշտպանութեան կազմակերպութեան նախագիծը, այն նպատակով, որ, ի միջի այլոց, ուստաց պատերազմական նաւերի լօցմանների պարտականութիւնները լրացվեն, պաշտպանութեան նշանաւոր կէտերի մէջ հաղորդակցութիւն պահպանվի և միաներ ընկղմելու ժամանակ օգնելու համար նպատակին: Այդ կազմակերպութեան արժողութիւնը հաշուած է մէկ միլիոն մարկ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բուսած ծաղիկներին: Նրա ուշադրութիւնը դրաւ խաշխաշի տեսակներից մէկի պայծառ և ալ գոյնը:

—Եկէք, կշռվելու, ասաց ֆելդշերը, բռնելով նրա ուսից: Երբ վերջինը երեսը դարձրեց նրան, նա դողդողաց վախից. ինչքան արհամարհանք և չարութիւն էին երևում նրա աչքերում: Բայց նայելով ֆելդշերին, նա փոխեց իր երեսի գծագրութիւնը և հեղութեամբ գնաց նրա յետին, չարատանկելով մի բառ անգամ, և, կարծես, ընկղմված լինելով խորին մտածողութեան մէջ: Նրանք մտան բժշկի գրասենեակը. հիւանդը ինքը բարձրացաւ ու կանգնեց փոքրիկ տանիքորդական կշիռքի տափարակի վրա: Ֆելդշերը, կշռելով նրան, նշանակեց գրքում նրա անունն մօտ 109 ֆունտ: Միւս օրը 108 էր, երբորդում 107:

Եթէ այսպէս շարունակվի, նա չի ապրի, ասաց բժիշկը և հրամայեց որքան կարելի նրան լաւ կերակրել:

Բայց, չը նայելով որ հիւանդի ախորժակը լաւ էր, նա օրեցօր մաշվում էր և ֆելդշերը ամեն օր գրքումը պակասեցնում էր նրա ծանրութեան թիւը: Հիւանդը համարեա չէր քնում և ամբողջ օրեր անց էր կացնում անընդհատ շարժողութեան մէջ:

(Կը շարունակվի)

